

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔՅԱԼ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍԻ ԱՃՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՄԵԾԱԴԻՐ ԽԱՉԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ

Հունիսի 28-ին, կիրակի: Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ռոստովի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ տ. Գրիգորիս արեղա Բունիաթյանը:

Մայր տաճարը լիքն է ուխտավոր և հավատացյալ բազմությամբ: Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել Մայր Աթոռի միաբանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Այսօր տոնական, բացառիկ օր է Մայր Աթոռի համար:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»:

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Ավագ սեղան: Վեհ ու տոնական հնչում են զանգերը: Մայր տաճարի կամարների տակ թնդում է «Ուրախ լեր, սուրբ եկեղեցի» շարականը: Տ. Հուսիկ եպիսկոպոսը հանդիսավորապես «վերբերում է» Հայաստանի Առաքյալ ս. Բարթողիմեոսի սաճյունը պարունակող մեծադիր խաչը Ավագ սեղան: Վեհափառ Հայրապետը խնկարկում է և, ընդունելով Առաքյալի սաճյուն-խաչը, այն հանդիսավորությամբ հանձնում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանին՝ կարգադրելով, որ զետեղվի Ավագ սեղանի վրա և այնտեղ պահվի 40 օրեր, «յուխտ և յերկրպագութիւն հաւատացելոց», և ապա վերադարձվի Մայր տաճարի եկեղեցական սրբությունների խորանը և գուրգուրանքով պահպանվի՝ Մայր տաճարում գտնվող ս. Բարթողիմեոս Առաքյալի ս. Աջի և մյուս մասունքների կողքին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔՅԱԼ Ս. ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍԻ ՄԱՍՈՒՆՔԸ

Ս. Բարթողիմեոս Առաքյալի աճյունը պարունակող մեծադիր խաչի հանձնումից հետո, Վեհափառ Հայրապետը քարոզում է՝ մայիսի 8—12 օրերին Հռոմում Սրբազան Քահանայապետին տված Իր պաշտոնական այցելության հոգևոր, եկեղեցական և պատմական նշանակության մասին՝ շեշտելով, որ այդ այցելությամբ մեր օրերին մի նոր էջ բացվեց հայ և կաթոլիկ եկեղեցիների տարեգրությանց մեջ, քրիստոնեական ընդհանրական եկեղեցու սուրբ առաքելության, Աստծու փառքի, մարդկանց բարօրության և աշխարհի խաղաղության համար:

Ս. Էջմիածնի Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը օրհնում է հավատացյալ ժողովրդին՝ ս. Բարթողիմեոս Առաքյալի մասունքի խաչով

Իր ոգեշունչ քարոզի մեջ Հայոց Հայրապետը հաղորդելով Հռոմի ս. Պետրոս տաճարի և Սրբազան Քահանայապետի քրիստոնեական սիրո ողջույնը, խոսում է նաև Հայաստանի Առաքյալ ս. Բարթողիմեոսի աճյունը պարունակող մեծադիր խաչի հանձնման արարողության հոգևոր և պատմական նշանակության մասին մեր եկեղեցու համար, և օրհնում սուրբ մասունք-խաչով բազմահազար հավատացյալներին, որոնք լցրել էին Մայր տաճարը և մայրավանքի շրջափակը: